ԵԴ1/0332/01/24
(ՀԿԴ/0250/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 մարտի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0332/01/24 (ՀԿԴ/0250/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 21-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի նոյեմբերի 7-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Սուսաննա Գառնիկի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 495-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և Կարինե Յուրիկի Ղուկասյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-204-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 319-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 59111323 (ՀԿԴ/0250/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի նոյեմբերի 10-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0250/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի նոյեմբերի 16-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հունվարի 15–ին ՀԿԴ/0250/01/23 քրեական գործով որոշում է կայացրել Կարինե Ղուկասյանի նկատմամբ վարույթն անջատելու մասին:

1.3. Հակակոռուպցիոն դատարանը, 2024 թվականի փետրվարի 12-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0250/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի փետրվարի 22-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0332/01/24 (ՀԿԴ/0250/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի փետրվարի 23-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ Սուսաննա Գառնիկի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1–ին և 3-րդ կետերով, 319–րդ հոդվածի 1–ին մասով և 495-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *« նա մասնակցել է Վարդան Ղուկասյանի կողմից ստեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպությանն ու հանդիսանալով «ԱԳԼԱ ԼՈՅԵՐՍ» ՍՊԸ հիմնադիր տնօրենը, Վարդան Յուրիկի Ղուկասյանի, Արտակ Գավրուշայի Գալստյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում Էլիզա Բայրամյանից խոշոր չափերի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ խաբեությամբ հափշտակել են խոշոր չափերի գույք, թաքցրել և հեղաթյուրել է հանցավոր ճանապարհով ստացված գույքի ծագումը, ինչպես նաև խոչընդոտել է դատավարության մասնակիցների լիազորությունների իրականացմանը:*

Այսպես.

Սուսաննա Գառնիկի Սարգսյանը հանդիսանալով ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան, և միաժամանակ «ԱԳԼԱ ԼՈՅԵՐՍ» ՍՊԸ հիմնադիր տնօրենը, նախապես տեղյակ լինելով իր մտերիմ Վարդան Յուրիկի Ղուկասյանի կողմից անձանց և կազմակերպությունների վերաբերյալ արատավորող, նրանց իրավունքներին և օրինական շահերին վնաս պատճառող, անձանց համար անցանկալի տեղեկություններ հավաքելու, տարածելու, այդպիսիք հետագայում

հրապարակելու ապառնալիքով գույք, գույքի նկատմամբ իրավունք կամ իրենց օգտին գույքային բնույթի գործողություններ կատարելու նպատակով, ինչպես նաև անձանցից խարդախությամբ գումարներ հափշտակելու և հանցավոր ճանապարհով ստացված գույքի ծագման աղբյուրը թաքցնելու և խեղաթյուրելու, այդ թվում ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու նպատակով ստեղծված և ղեկավարվող, անհամեմատ ծավալուն նպատակներ հետապնդող երկար տևողությամբ հանցավոր գործունեությամբ զբաղվելու, առավել կայունությամբ և համախմբվածությամբ աչքի ընկնող, առավել բարդ ներքին կառուցվածք ունեցող հանցավոր կազմակերպության մասին, իր մասնագիտական գիտելիքները հանցավոր կազմակերպության հետապնդած նպատակներին ծառայեցնելու համար անդամակցել՝ մասնակցել է, հանցավոր կազմակերպությանը, որի կազմում կատարել է ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ, այն է՝ խոշոր չափերի հափշտակություն, ինչպես նաև հանցավոր կազմակերպության գործունեության արդյունքում ձեռք բերված գույքերի հանցավոր ծագումը թաքցնելը և խեղաթյուրելը:

Այսինքն՝ Սուսաննա Գառնիկի Սարգսյանին մեղսագրվում է պատժի ապառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված հանցանքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, Էլիզա Հրանտի Բայրամյանն ամուսնուց՝ Արմեն Ցոլակի Հակոբյանից 2012 թվականին ամուսնալուծվելուց հետո, դստեր՝ Դանիէլլա Հակոբյանի խնամքը սրանձնելու, վերջինիս իր հետ բնակվելու իրավական գործընթացի կապակցությամբ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով «facebook» սոցիալական ցանցի միջոցով 2021 թվականի ապրիլի 06-ին հաղորդագրություն է ուղարկել հանրությանը հայտնի «Վարդան Ղուկասյան» օգտատիրոջը՝ վստահելի փաստաբանի տրամադրման հարցում իրեն օգնելու խնդրանքով: Վարդան Ղուկասյանը, հանցավոր կազմակերպության կազմում նպատակ հետապնդելով Էլիզա Բայրամյանից խարդախությամբ կատարել հափշտակություն, հաղորդագրության միջոցով Էլիզա Բայրամյանին ուղղորդել է իր անունից դիմել Արտակ Գալստյանին՝ փոխանցելով վերջինիս կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարը: Էլիզա Բայրամյանը Արտակ Գալստյանի հեռախոսահամարը փոխանցել է իր ծնողներին՝ Հրանտ և Թամարա Բայրամյաններին, ովքեր շուրջ երկու շաբաթ անց Արտակ Գալստյանի հետ հեռախոսազրույց ունենալուց հետո գնացել և վերջինիս հանդիպել են Երևան քաղաքի Գայի պողոտա 2 հասցեում: Արտակ Գալստյանը Հրանտ և Թամարա Բայրամյաններին որպես փաստաբան ներկայացրել է հանցավոր կազմակերպության մասնակից Սուսաննա Սարգսյանին, ով Արտակ Գալստյանի հետ Հրանտ և Թամարա Բայրամյաններին խոստումներ են տվել խնդրին շատ արագ լուծում տալ և երաշխավորել են անչափահաս Դանիէլլա Հակոբյանի ՌԴ վերադարձը կազմակերպել, ինչի համար պահանջել են 9.000 ԱՄՆ դոլարին

համարժեք 4.700.000 ՀՀ դրամ գումար: Այնուհետև, Սուսաննա Սարգսյանը Հրանտ Բայրամյանի հետ «10.12.2019թ.» թվագրմամբ կնքել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր՝ ըստ որի հավելվածի՝ պայմանագրի գինը կազմել է 4.700.000 ՀՀ դրամ՝ պատվիրատուի կողմից մինչև 2021 թվականի հունիսի 23-ը վճարելու պայմանով: Դրանից հետո Արտակ Գալստյանի ներկայությամբ և հորդորով Էլիզա Բայրամյանի ծնողների կողմից Սուսաննա Սարգսյանին առձեռն փոխանցվել է 5000 ԱՄՆ դոլարին համարժեք 2.597.150 ՀՀ դրամը: Սուսաննա Սարգսյանը գումարը ստանալուց հետո Էլիզա Բայրամյանին հայտնել է, որ զբաղվում է նրա դստեր հարցով, դիմել է համապատասխան մարմիններին երեխայի ՀՀ-ից ելքը արգելափակելու և երեխայի տեսակցության կարգ սահմանելու համար: Այնուհետև, Էլիզա Բայրամյանը 2021 թվականի սեպտեմբերի 13-ին հարցաքննության հրավիրված լինելով քննչական մարմնի կողմից, Սուսաննա Սարգսյանին տեղեկացրել է այդ մասին, ով կրկին իրենից պահանջել է 491.880 ՀՀ դրամին համարժեք 1000 ԱՄՆ դոլար, որը Էլիզա Բայրամյանը 2021 թվականի սեպտեմբերի 13-ին առձեռն տվել է Սուսաննա Սարգսյանին: Էլիզա Բայրամյանը հետագայում համապատասխան հարցումների միջոցով պարզել է, որ դուստրը 2021 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ-ից դուրս է բերվել դեպի Վրաստանի Հանրապետություն, այնուհետև ԱՄԷ Շարժա, այնտեղից Դուբայ քաղաք, ինչի մասին տեղեկացրել է Սուսաննա Սարգսյանին: Էլիզա Բայրամյանի մոտ վերջինիս փաստաբանական ծառայություններ մատուցելու գործողություններով ստեղծված վստահությունը չարաշահելով՝ Արտակ Գալստյանը և Սուսաննա Սարգսյանը գիտակցելով և օգտվելով Էլիզա Բայրամյանի կողմից դստերը ամեն գնով իրեն վերադարձնելու խոցելի դրությունը և այդ նպատակին հասնելու համար նրա կողմից ցանկացած գումար վճարելու մինչ այդ դրսևորած պատրաստակամությունը, հանցավոր կազմակերպության կազմում նպատակ ունենալով իրագործել Էլիզա Բայրամյանից խարդախությամբ հափշտակություն կատարելու իրենց հանցավոր մտադրությունները, 2022 թվականի նոյեմբերի 11-ին բջջային «WhatsApp» հավելվածի միջոցով Ս.Սարգսյանը հաղորդագրություններ է ուղարկել Էլիզա Բայրամյանին, խաբեությամբ նրան հայտնել, թե իբրև կան մարդիկ, ովքեր շեյխերի մակարդակով կարող են գտնել երեխային և կարգավորել վերջինիս վերադարձի խնդիրը, ինչի համար Էլիզա Բայրամյանից պահանջել է 2.000.000 ՀՀ դրամ՝ վստահեցնելով, թե ինքը գումարի չափը հնարավորինս նվազեցրել է՝ հաշվի առնելով երեխայի առողջական վիճակը և նրա ֆիզանսական դրությունը, իսկ որոշ ժամանակ անց Էլիզա Բայրամյանին տեղեկացրել է, թե պետք է գնան Դուբայ քաղաք, սակայն Դուբայի իրենց գործընկերները նպատակահարմար են գտնում այնտեղ մեկնել տոներից հետո՝ 2023 թվականի հունվարին, իսկ մինչ այդ 2.000.000 ՀՀ դրամը պետք է փոխանցվի իրենց գործընկերներին: Իբր Դուբայի գործընկերների հետ կապի մեջ գտնվելու հանգամանքը հիմնավորելու նպատակով Սուսաննա Սարգսյանը Էլիզա

Բայրամյանին ցույց է տվել հաղորդագրություններ և դրանց պատասխանները, այդ թվում՝ արաբական ազգային հագուստով լուսանկար, որը Հայկ Խաչատրյանը Արտակ Գալստյանի պահանջով ուղարկել է Սուսաննա Սարգսյանին, որպիսի գործողություններով Արտակ Գալստյանը վճռականություն է հաղորդել Էլիզա Բայրամյանին խոշոր չափի գումարը Սուսաննա Սարգսյանին փոխանցելու համար: Էլիզա Բայրամյանը, վստահելով Սուսաննա Սարգսյանին, համաձայնել է վերջինիս առաջարկին և 2022 թվականի դեկտեմբերի 23-ին, 26-ին և 29-ին բանկային փոխանցմամբ Սուսաննա Սարգսյանին է փոխանցել համապատասխանաբար 143.000 ՌԴ ռուբլուն համարժեք 787.620 ՀՀ դրամ, 150.000 ՌԴ ռուբլուն համարժեք 864.000 ՀՀ դրամ, 70.000 ՌԴ ռուբլուն համարժեք 381.500 ՀՀ դրամ /ընդհանուր՝ 2.033.120 ՀՀ դրամ/, ընդ որում՝ վերջին 70.000 ՌԴ ռուբլին Էլիզա Բայրամյանը փոխանցել է Սուսաննա Սարգսյանի դստեր Անուշ Ղազարյանի անվամբ: Սուսաննա Սարգսյանը Էլիզա Բայրամյանին տեղեկացրել է նաև, թե իբրև ամբողջ գումարը չփոխանցելու դեպքում երեխայի ելքը Դուբայ քաղաքից չի արգելափակվի ու հնարավոր է նրան տեղափոխեն այլ երկիր, այդպիսով՝ Էլիզա Բայրամյանին հարկադրելով իրեն փոխանցել ամբողջ գումարը, ինչը վերջինս փաստացի կատարել է: Այնուհետև, 2023 թվականի մարտի 7-ին Սուսաննա Սարգսյանը հաղորդագրությունների միջոցով Էլիզա Բայրամյանին տեղեկացրել է, որ Դուբայ մեկնելու փոմների, հյուրանոցի և վիզայի համար անհրաժեշտ է վճարել 2500 ԱՄՆ դոլար: Էլիզա Բայրամյան իր կողմից օգտագործվող, սակայն եղբոր՝ Էդվարդ Բայրամյանի անվամբ հաշվառված բանկային քարտից Սուսաննա Սարգսյանի բանկային քարտին 2500 ԱՄՆ դոլարին համարժեք 990.000 ՀՀ դրամ գումար փոխանցելուց հետո, ստացել է Սուսաննա Սարգսյանի կողմից ուղարկված երեք անձի համար՝ այդ թվում հանցավոր կազմակերպության անդամ Հայկ Խաչատրյանի անվամբ լրացված ավիատոմսերը, վիզաները և հյուրանոցի վաուչերները: Դրանից հետո, Սուսաննա Սարգսյանը 2023 թվականի մարտի 10-ին Էլիզա Բայրամյանի հետ մեկնել է Դուբայ քաղաք, որտեղ շարունակել է վերջինիս վստահեցնել, թե իբրև ինչ-որ մարդիկ զբաղվում են նրա դստեր հարցերով, որ վերջինս գտնվում է Դուբայ քաղաքում, այնինչ՝ Էլիզա Բայրամյանի կողմից պարզվել է, որ դուստրը 2022 թվականի մայիս ամսին մեկնել է Դուբայ քաղաքից Թուրքիայի հանրապետություն, ինչից հետո մարտի 14-ին վերադարձել են ՀՀ, այդպես էլ չկատարելով դստերը Էլիզա Բայրամյանին վերադարձնելու ստանձնած կեղծ խոստումները: Հետագայում Արտակ Գալստյանը Էլիզա Բայրամյանին տվել է իրենց կողմից հափշտակած գումարի մի մասը վերադարձնելու կեղծ խոստումներ, այդպիսով իրենց համար անցանկանալի հետևանքներից՝ Էլիզա Բայրամյանի կողմից իրավապահ մարմիններին դիմելու վտանգը չեզոքացնելու համար: Այդ կերպ, Սուսաննա Սարգսյանը հանցավոր կազմակերպության կազմում Արտակ Գալստյանի և Վարդան Ղուկասյանի հետ Էլիզա Բայրամյանից խարդախությամբ

հափշտակել է ընդհանուր 2.693.120 ՀՀ դրամ, վերջինիս պատճառելով խոշոր չափերի գույքային վնաս:

Այսինքն՝ Սուսաննա Սարգսյանին մեղսագրվում է պատժի սպառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված հանցանքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Բացի այդ, Սուսաննա Սարգսյանը, հանդիսանալով «ԱԳԼԱ ԼՈՅԵՐՍ» ՍՊԸ հիմնադիր փնօրենը, հանցավոր կազմակերպության կազմում Հայկ Խաչատրյանի, «Հանրային ձայն» կուսակցության նախագահ Արտակ Գալստյանի, «Դոգ» մականվամբ Վարդան Ղուկասյանի հետ Շահեն Ալեքսանդրի Աղյանից հանցավոր կազմակերպության անդամներ Ա.Գալստյանի և Հ.Խաչատրյանի կողմից հանցավոր ճանապարհով ստացված 6.000.000 ՀՀ դրամի հանցավոր ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու դիտավորությամբ ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13122120 քրեական գործով Հայկ Խաչատրյանի պաշտպանությունն իրականացնելու պատրվակով 2022 թվականի հունիսի 23-ին վերջինիս հետ կնքել է ծառայությունների վճարովի մատուցման մասին ձևական պայմանագիր:

Այսպես.

Հանցավոր կազմակերպության ղեկավար Վարդան Ղուկասյանը, հանցավոր կազմակերպության մասնակիցներ Արտակ Գալստյանը և Հայկ Խաչատրյանը Կարեն Առուստամյանի նկատմամբ 34.000 ԱՄՆ դոլար գումար վճարելու պարտավորություն ստանձնելուն Արսեն Հարությունյանին հարկադրելու նպատակով, Շահեն Աղյանից 2023 թվականի հունիս 24-ին որպես հիշյալ հանցավոր գործողությունների կատարման պատվեր հանցավոր ճանապարհով ստացել են 8.000.000 ՀՀ դրամ գումար, ինչի վերաբերյալ Հ.Խաչատրյանի և Շահեն Աղյանի միջև կնքվել է 8.000.000 ՀՀ դրամի փոխառության պայմանագիր: Սուսաննա Սարգսյանը, հանդիսանալով «ԱԳԼԱ ԼՈՅԵՐՍ» ՍՊԸ հիմնադիր փնօրենը, նախնական համաձայնության գալով Վարդան Յուրիկի Ղուկասյանի, Արտակ Գավրուշայի Գալստյանի և Հայկ Գեղամի Խաչատրյանի հետ, հանցավոր կազմակերպության կազմում, Շահեն Ալեքսանդրի Աղյանից հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափի՝ 8.000.000 ՀՀ դրամ գումարից 6.000.000 ՀՀ դրամի հանցավոր ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու դիտավորությամբ, ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13122120 քրեական գործով մեղադրյալ Հայկ Խաչատրյանի պաշտպանությունն իրականացնելու պատրվակով 2022 թվականի հունիսի 23-ին վերջինիս հետ կնքել է ծառայությունների վճարովի մատուցման մասին ձևական պայմանագիր՝ ձևականորեն ստանձնելով Հայկ Խաչատրյանի պաշտպանությունը: Այնուհետև, 2022 թվականի հունիսի 24-ին, Հայկ Խաչատրյանը, Շահեն Աղյանից առձեռն ստանալով 8.000.000 ՀՀ դրամը՝ Կարեն Առուստամյանի հետ գնացել են «Հանրային ձայն» կուսակցության գրասենյակ,

որտեղ Արտակ Գալստյանի ցուցումով Հայկ Խաչատրյանը գումարի մի մասը՝ 6.000.000 ՀՀ դրամը, հանձնել է Սուսաննա Սարգսյանին, իսկ մյուս մասը պահել իր մոտ:

Այսինքն՝ Սուսաննա Սարգսյանին մեղսագրվում է պատժի ապառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված հանցանքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

Բացի այդ, Սուսաննա Գառնիկի Սարգսյանը խմբի կազմում ապօրինի եղանակով ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի կալանավոր Հայկ Գեղամի Խաչատրյանին հարկադրել է թիվ 59100223 քրեական վարույթով մեղադրյալ, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի կալանավոր Արտակ Գավրուշայի Գալստյանի վերաբերյալ ցուցմունքներ չտալուն:

Այսպես՝

Սուսաննա Գառնիկի Սարգսյանը նախնական համաձայնության գալով թիվ 13122120 քրեական վարույթով մեղադրյալ, ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի կալանավոր Հայկ Գեղամի Խաչատրյանի պաշտպան Էդուարդ Վարդգեսի Ասլանյանի՝ թիվ 59100223 քրեական վարույթով մեղադրյալ, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի կալանավոր Արտակ Գավրուշայի Գալստյանի հետ, Հայկ Խաչատրյանի կողմից Արտակ Գալստյանին հանցանքի կատարման մեջ մերկացնող ցուցմունքներ չտալուն հարկադրելու դիտավորությամբ, Հայկ Խաչատրյանի պաշտպան Էդուարդ Ասլանյանի հետ 2023 թվականի մայիսի 05-ին՝ ժամը 14:44-ին, իր կողմից վարած «Porsche Cayenne» մակնիշի ավտոմեքենայով ժամանել են ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկ, ապա գնացել ՔԿ հիմնարկի քննչական սենյակներ, որից հետո՝ ժամը 15:10-ից մինչև 16:10-ն ընկած ժամանակահատվածում, քննչական սենյակում Էդուարդ Ասլանյանն ընդունել է Հայկ Խաչատրյանին, իսկ ժամը 14:55-ից մինչև 16:15-ն ընկած ժամանակահատվածում քննչական սենյակում Սուսաննա Սարգսյանը ձևական իր մոտ է հրավիրել մեկ այլ գործով կալանավոր Հովսեփ Գրիգորյանին: Այնուհետև, Սուսաննա Սարգսյանը, չունենալով կալանավոր Հ.Խաչատրյանին տեսակցելու իրավունք, գիտակցելով և անտեսելով Հ.Խաչատրյանի կողմից այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը դատարանի որոշմամբ սահմանափակված լինելու հանգամանքը, մուտք է գործել Է.Ասլանյանի և Հ.Խաչատրյանի կողմից զբաղեցված քննչական սենյակ, փաստական ժամանակ առանձնազրույց ունեցել Հ.Խաչատրյանի հետ՝ ապօրինի եղանակով իրագործելով հանցավոր խմբի դիտավորության մեջ ընդգրկված գործողությունները, այն է՝ Էդուարդ Ասլանյանի ներկայությամբ Հայկ Խաչատրյանին ասել է, որ Արտակ Գալստյանի վերաբերյալ քրեական վարույթով ապացույցներ չկան, վերջինս շուտով ազատ է արձակվելու, ոչինչ չհայտնի վարույթն իրականացնող մարմնին, և շուտով ինքն էլ է ազատ արձակվելու՝ այդպիսով ապօրինի եղանակով հարկադրել է Հայկ Խաչատրյանին Արտակ

Գալստյանի վերաբերյալ ցուցմունքներ չտալուն, ինչից հետո՝ ժամը 16:12-ին, Սուսաննա Սարգսյանը և Էդուարդ Ասլանյանը միասին հեռացել են ՔԿ հիմնարկից։(…)»[1]։

5. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16–ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6–ին ուժի մեջ մտած ՀՕ–31–Ն ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1–ում «Հոդված 296. Փողերի լվացումը» բառերը փոխարինվել է «Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով, ինչի արդյունքում սույն գործով մեղադրյալ Սուսաննա Սարգսյանին վերագրվող հանցանքները, մասնավորապես, փողերի լվացումն այլևս չի հանդիսանում կոռուպցիոն հանցանք, ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1–ում, ուստի սույն քրեական գործն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին։*

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Սուսաննա Սարգսյանին վերագրվող ենթադրյալ հանցանքները կատարվել են Երևան քաղաքում, ուստի սույն քրեական գործն առարկայական և տարածքային ընդդատության կանոններին համապատասխան պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան։ (…)»[2]։

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«Դատարանը, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0332/01/24 քրեական գործի նյութերը, ծանոթանալով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի փետրվարի 12-ի որոշմանը, գտնում է, որ սույն քրեական գործը ենթակա չի եղել փոխանցման ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, հետևաբար այս դեպքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական և հակակոռուպցիոն դատարանների միջև առկա է ընդդատության մասին վեճ, որը լուծելու համար պետք է դիմել ՀՀ վճռաբեկ դատարան՝ հետևյալ հիմնավորումներով.

(…) [Դ]ատարանը գտնում է, որ գործի քննության ընթացքում քրեական օրենսգրքի համապատասխան հավելվածում փոփոխությունների դեպքում վարույթները չպետք է փոխանցեն ըստ ընդդատության, քանի որ դրանք դատարանի կողմից ստանալու պահին եղել են ճիշտ ընտրված ընդդատությամբ և կանխավարկածը պետք է լինի գործի քննության շարունակությունը տվյալ դատարանում, այլ ոչ թե այն ըստ ընդդատության փոխանցելը։

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 21, թերթեր 250-257։

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 25, թերթեր 5-8։

Դատարանի այս դատողությունը, ի թիվս այլոց, պայմանավորված է հետևյալ հիմնավորումներով.

ա. Ընդդատության կանոնները պետք է զերծ պահեն անձին դատական շրջապտույտից՝ նպաստելով գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը և արդյունավետ արդարադատության իրականացմանը:

բ. Գործի ընդդատությունը որոշելը, որպես դատավարական գործողություն, որոշվում է այդ գործը ստանալու պահին գործող օրենսգրքի նորմերին համապատասխան և դատավարական նորմի հետադարձության կանոն այդ մասով նախատեսված չէ:

գ. Քրեական օրենսգրքի հավելվածի փոփոխությունը համարվում է քրեական օրենքի վրիպոխություն, որի վրա լիարժեքորեն տարածվում են քրեական օրենքի հետադարձության կանոնները սահմանող նորմի կարգավորումները: Այս դեպքում հարկ է արձանագրել, որ կոռուպցիոն հանցագործությունները սահմանող հավելվածի փոփոխությունը ոչ՛ մեղմացնող, ոչ՛ խստացնող օրենք է, հետևաբար դրա կիրառությունը հետադարձ կերպով անթույլատրելի է, եթե չկա համապատասխան անցումային դրույթ ընդունված օրենքում: Այլ կերպ՝ քրեական օրենքի փոփոխությունը, որով չի բարելավվում անձի վիճակը, տարածվում է այն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

դ. ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն ՀՀ օրենքը չի նախատեսում անցումային դրույթ, ըստ որի՝ դատարանների վարույթում գտնվող նախկին կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ վարույթները պետք է վախանցվեն ըստ ընդդատության: Դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն օրենսդրության փոփոխության նախկին դեպքերի, երբ օրենսդիրն անցումային դրույթի ուժով կարգավորել էր գործերի վախանցումը ՀՀ հակակոռուպցիոն դատարան, այս դեպքում նման նորմ չի նախատեսել, ինչը հիմք է տալիս գալ հիմնավոր այն եզրահանգման, որ օրենսդրի կամքը եղել է հիշյալ քրեական վարույթների քննությունը գործը ստացած դատարանում մնալը: Հակառակ դեպքում հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ տարբեր ժամանակներում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում քրեական գործը կհայտնվի անվերջ «շրջապտույտի» մեջ: Օրինակ՝ դատարանում ավարտական փուլում (դատական վիճաբանություններ կամ եզրափակիչ եւույթներ) գտնվող քրեական գործը զուտ օրենսդրական փոփոխություններից ելնելով առարկայական ընդդատությամբ ուղարկվի այլ դատարան, իսկ որոշ ժամանակ անց՝ նույն հիմնավորումներով վերադարձվի այն ուղարկած դատարան:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ դատարանը վերահաստատում է իր մոտեցումը, որ առարկայական ընդդատության ենթակա գործերի փոփոխության դեպքում գործում է ճիշտ ընդդատությամբ գործը ստացած դատարանի կողմից

գործի քննությունը շարունակելու կանխավարկածը, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ընդունված նոր օրենքով: Նման մոտեցումը միտված է ապահովելու ընդդատության որոշման կանոնի կայունության հատկանիշը, ինչը պետք է բացառի քրեական գործերի ձևական հիմքերով «միգրացիան» դատարանների միջև:

Ամփոփելով ամբողջ վերը նշվածը՝ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը սույն գործը ճիշտ ընդդատությամբ ստանալով շուրջ վեց դատական նիստ անցկացնելուց հետո, ինչ-ինչ պատճառներով դրանից մաս անջատելով, որից հետո նորից նախնական դատական լսումներ անցկացնելով և ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի փոփոխության հիման վրա քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելով՝ ընդդատության որոշման կանոնի կապակցությամբ դրսևորել է ձևական մոտեցում և առանց նյութական ու դատավարական բավարար հիմքերի փոխանցել է գործն ըստ ընդդատության:

Դատարանն անդրադառնալով այն հավանական փաստարկին, ըստ որի քրեական դատավարության օրենսգիրքը թույլատրում է քրեական գործն ընդդատությամբ ուղարկել ցանկացած փուլում, արձանագրում է, որ այդ կարգավորումը վերաբերում է միայն գործի քննության ընթացքում ի հայտ եկած նոր փաստերին, այլ ոչ թե օրենքի փոփոխությանը: (…)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0332/01/24 (ՀԿԴ/0250/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 25, թերթեր 9-11:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հատակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հատակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը նոտրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

*1) «Հոդված 296. Փողերի լվացումը» բառերը փոխարինել **«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով:*

15. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի համաձայն՝ *«23. (...) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (...) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:*

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ»:

16. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):(...):*

3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

4. Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը»:

17. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին՝ փաստելով, որ Ս.Սարգսյանին վերագրվող հանցանքը՝ փողերի լվացումը, 2024 թվականի հունվարի 16–ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6–ին ուժի մեջ մտած ՀՕ–31–Ն ՀՀ օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1–ում կատարված փոփոխության արդյունքում այլևս չի հանդիսանում կոռուպցիոն հանցանք[7]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրել է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը սույն գործը ճիշտ ընդդատությամբ ստանալով շուրջ վեց դատական նիստ անցկացնելուց հետո, ինչ-ինչ պատճառներով դրանից մաս անջատելով, որից հետո նորից նախնական դատական լսումներ անցկացնելով և ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի փոփոխության հիման վրա քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելով՝ ընդդատության որոշման կանոնի կապակցությամբ դրսևորել է ձևական մոտեցում և առանց նյութական ու դատավարական բավարար հիմքերի փոխանցել է գործն ըստ ընդդատության:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն անդրադառնալով նաև այն հավանական փաստարկին, ըստ որի քրեական դատավարության օրենսգիրքը թույլատրում է քրեական գործն ընդդատությամբ ուղարկել ցանկացած փուլում, արձանագրել է, որ այդ կարգավորումը վերաբերում է միայն գործի քննության ընթացքում ի հայտ եկած նոր փաստերին, այլ ոչ թե օրենքի փոփոխությանը[8]:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ նորմի համալիր վերլուծությունից հետևում է, որ ՀՀ իրավական համակարգում թույլատրելի է օրենքի անալոգիա կիրառելը, սակայն պայմանով, որ նախ՝ պետք է օրենսդրության մեջ բացակայի կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն այդ նույն օրենսդրությամբ սահմանված լինի

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, որը, եթե չի հակասում դրանց էությանը, կարող է կիրառվել համանման հարաբերությունների նկատմամբ, երկրորդ՝ կոնկրետ օրենսդրությունը, որում առաջացել է անալոգիա կիրառելու անհրաժեշտություն, չպետք է արգելի անալոգիայի կիրառումը, երրորդ՝ անալոգիայի կիրառումը չպետք է սահմանափակի անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսի նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացնի նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը և այլն:

19. Վերոգրյալի հիման վրա, անդրադառնալով սույն դեպքում անալոգիա կիրառելու թույլատրելիությանը և իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16–ին ընդունված ՀՕ–31–Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերն այլևս չեն հանդիսանում կոռուպցիոն հանցանք և ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1–ում, հետևաբար դրանց վերաբերյալ վարույթներն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Սակայն, կատարված փոփոխությամբ որևէ կարգավորում չի սահմանվել առ այն, թե արդյո՞ք Հակակոռուպցիոն դատարանի վարույթում գտնվող նմանատիպ վարույթները ենթակա են վերաբաշխման, թե ոչ:

Այդունահդերձ, դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերով սահմանվել է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ այն գործերը, որոնցով **անցում չի կատարվել դատաքննության փուլ,** վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև: Այսինքն, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով լուծում է տրվել համանման իրավահարաբերությանը, ըստ որի՝ դատաքննության փուլ անցում չկատարված լինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող վարույթի փոխանցումը Հակակոռուպցիոն դատարան իրավաչափ է:

Հաշվի առնելով, որ ինչպես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն արգելում անալոգիայի կիրառումը, ինչպես նաև տվյալ

պարագայում անալոգիայի կիրառումն անձանց իրավունքները, ազատությունները չի սահմանափակում կամ նրանց համար նոր պարտականություն կամ պատասխանատվություն չի նախատեսում, գտնում ենք, որ տվյալ իրավիճակում ընդդատության հարցը պետք է լուծվի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերին համահունչ: Այլ կերպ՝ այն դեպքում, երբ Հակակոռուպցիոն դատարանն անցում չի կատարել հիմնական դատալսումների փուլ, գործը ենթակա է վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

20. Վերոշարադրյալի հիման վրա և հաշվի առնելով, որ սույն գործով Հակակոռուպցիոն դատարանն անցում չի կատարել հիմնական դատալսումների փուլ, ուստի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0332/01/24 (ՀԿԴ/0250/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

21. Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0332/01/24 (ՀԿԴ/0250/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Սուսաննա Գառնիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 495-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 319-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԵԴ1/0332/01/24 (ՀԿԴ/0250/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ